

ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Մարտին Խաչիկյան

«ԲԻ ԷԼ ՍԻ» ՍՊԸ իրավաբան, փաստաբան

Իրավաբանական անձի կարգավիճակ ձեռք բերելու կարևորությունն ընդգծվել է նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի կողմից *Sidiropoulos v. Greece* գործով կայացված վճռում՝ դեռևս 1998 թվականին, հետագայում վերահաստատվելով բազմաթիվ այլ գործերով: Ընդ որում, այդ գաղափարից բխում է, որ իրավաբանական անձի կարգավիճակն անհիմաստ կլիներ, եթե այն չտարբերվեր իր հիմնադիրներից և անդամներից՝ չկրելով պատասխանատվություն իր գործողությունների համար որպես ինքնուրույն անձ¹:

Կորպորատիվ մարմինների պատասխանատվության կարևոր առանձնահատկությունն այն է, որ դրա կարգավորման աղբյուրը ոչ միայն օրենքն է, այլ նաև կազմակերպության կանոնադրություն է²: Որոշ իրավաբան գիտնականներ այն կարծիքին են, որ կորպորատիվ պատասխանատվությունը, լինելով իրավական պատասխանատվության տեսակ, հիմնված է հետևյալ սկզբունքների վրա՝ արդարություն, օրինականություն, նպատակահարմարություն և անխուսափելիություն³:

Վնաս պատճառելուց ծագող պարտավորությունը քաղաքացիաիրավական պատասխանատվության ձև է, որն ունի իր գործառույթները: Այն առաջին հերթին տուժողի գույքային շահերը պաշտպանելու նպատակ է հետապնդում, ուստի և կատարում է վերականգնման գործառույթ⁴:

Հայրենական իրավաբան գիտնականներից Գ. Բեքմեզյանը վնաս պատճառելու հետևանքով ծագող պարտավորությունները բնութագրել է հետևյալ կերպ. «Վնաս պատճառելու հետևանքով ծագած պարտավորությունը քաղաքացիաիրավական պարտավորություն է, որի ուժով տուժողն իրավունք ունի վնաս պատճառելու համար պատասխանատու անձից պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասը: Այս պարտավորության մեջ տուժողը հանդես է գալիս որպես պարտատեր, իսկ վնաս պատճառողը՝ պարտապան»⁵:

Օրենսդիրը ՀՀ քաղաքացիական օրենսգրքով սահմանել է նաև վնաս պատ-

¹ Տե՛ս *Sidiropoulos v. Greece*, 26695/95, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 10.07.1998 թ. վճիռը, էլեկտրոնային ռեսուրս <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-58205> էլեկտրոնային հասանելիությունը 21.03.23 թվականի դրությամբ, *Gorzelik and Others v. Poland*, 44158/98, Մարդու իրավունքների եվրոպական դատարանի 10.07.1998 թ. վճիռը, էլեկտրոնային ռեսուրս <http://hudoc.echr.coe.int/eng/?i=001-61637> էլեկտրոնային հասանելիությունը 21.03.23 թվականի դրությամբ:

² Տե՛ս *Дзюцева Д.М., Кабалоева А.Т. Особенности корпоративной ответственности// «Гуманитарные и юридические исследования»*, 2017, էջ 156–161:

³ Տե՛ս *Корпоративное право: учебник и практикум для бакалавриата и магистратуры / Г. Ф. Ручкина [и др.]; под редакцией Г. Ф. Ручкиной. — М.: Издательство Юрайт, 2019, էջ 133:*

⁴ Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք: Երկրորդ մաս. Եր.: Երևանի համալս. իրատ., 2001, 597 էջ:

⁵ Տե՛ս Գ. Բեքմեզյան, Վնաս պատճառելուց բխող պարտավորություններ (արտապայմանագրային պարտավորություններ) | Ուս. ձեռնարկ: Հեղինակային իրատ., Հայաստան, Երևան, 2017թ., 12 էջ:

ճառելու հետևանքով ծագող արտապայմանագրային իրավահարաբերությունների առաջացման վերաբերյալ իրավակարգավորումները, մասնավորապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի¹ 1058-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Քաղաքացու անձին կամ գույքին, ինչպես նաև իրավաբանական անձի գույքին պատճառված վնասը լրիվ ծավալով ենթակա է հատուցման այն պատճառած անձի կողմից:

Վնասի հատուցման պարտականությունն օրենքով կարող է դրվել վնաս չպատճառած անձի վրա»:

ՀՀ վճռաբեկ դատարանը բազմիցս անդրադարձել է վնաս պատճառելու հետևանքով հարաբերությունների ծագման համար անհրաժեշտ պայմանների առկայության հարցին: Մասնավորապես՝ թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով՝ 13.02.2009 թվականին կայացրած որոշմամբ արձանագրել է, որ Օրենսգրքի 14-րդ հոդվածի 10-րդ կետի, 17-րդ հոդվածի 1-ին կետի և 1058-րդ հոդվածի 1-ին կետի վերլուծությունից հետևում է, որ վնասի հատուցման համար պարտադիր պայման է պարտապանի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու պարտապանի մեղքի միաժամանակյա առկայությունը²:

ՀՀ վճռաբեկ դատարանը մինչ 2022 թվականը ձևավորել էր այն պրակտիկան, որ վնասի հատուցման պարտականություն կարող է ծագել նաև պայմանագրային հարաբերություններից: Ընդ որում՝ պայմանագրային հարաբերություններից ծագած վնասի հատուցման նկատմամբ ևս կիրառելի են ՀՀ վճռաբեկ դատարանի արտահայտած վերոհիշյալ իրավական դիրքորոշումները, մասնավորապես՝ պատճառված վնասի համար պատասխանատվության պայմանների, այդ պայմանների առկայության կամ բացակայության ապացուցման բեռի բաշխման հարցերի վերաբերյալ³, սակայն վերջինս 2022 թվականի մայիսի 20-ին թիվ ԵԱՆԴ/2914/02/17 քաղաքացիական գործով կայացրած որոշմամբ արձանագրել է, որ բեռնափոխադրման պայմանագրի շրջանակներում պատճառված վնասի փոխհատուցման նկատմամբ կիրառելի է միայն համապատասխան բաժնի իրավակարգավորումները, իսկ դեփկտային իրավահարաբերությունները կարգավորող իրավանորմերը կիրառելի չեն, եթե պատճաված վնասը արդյունք է պայմանագրի շրջանակներում կատարված գործողությունների⁴:

Իրավաբանական անձի կառավարման մարմինների պատասխանատվության հարցին անդրադառնում է Օրենսգրքի 57-րդ հոդվածի 3-րդ մասը, որի համաձայն՝ անձը, որն օրենքի կամ իրավաբանական անձի կանոնադրության ուժով հանդես է գալիս նրա անունից, պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող իրավաբանական անձի: Նա պարտավոր է իրավաբանական անձի հիմնադիրների (մասնակիցների) պահանջով հատուցել իր կողմից իրավաբանական անձին պատճառած վնասները, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով:

Օրենսդրի կողմից՝ ընկերությանը կամ Ընկերության այն բաժնետերին (բաժնետերերին), որը (որոնք համատեղ) տնօրինում է (են) Ընկերության տեղաբաշխված հասարակ (սովորական) բաժնետոմսերի մեկ և ավելի տոկոսին, իրավունք վերապահել խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօ-

¹ ՀՀՊՏ 1998.08.10/18(51): Այսուհետ նաև՝ Օրենսգրքը:

² Առավել մանրամասն տե՛ս Նատալյա Հակոբյանն ընդդեմ Վարդան Հայրապետյանի թիվ ՀՔԴ3/0016/02/08 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 13.02.2009 թվականի որոշումը:

³ Առավել մանրամասն տե՛ս թիվ ԵԿԴ/1765/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 26.06.2020 թվականի որոշումը:

⁴ Առավել մանրամասն տե՛ս թիվ ԵԱՆԴ/2914/02/17 քաղաքացիական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 20.05.2022 թվականի որոշումը:

րենության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարչի դեմ հայցով դիմել դատարան՝ Ընկերությանը պատճառված վնասների փոխհատուցման պահանջով («Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքի¹ 90-րդ հոդվածի 5-րդ մաս):

Օրենսդիրը Օրենքով նախատեսել է առանձին կարգավորումներ՝ կառավարման մարմինների պատասխանատվության վերաբերյալ, մասնավորապես՝ սահմանվել է նրանց կատարած գործողությունների (անգործության) հետևանքով առաջացած վնասների փոխհատուցման ինստիտուտը:

Ելնելով վերոգրյալից՝ կարծում ենք, որ առկա է անհրաժեշտություն՝ վեր հանելու կորպորատիվ կառավարման մարմինների կողմից Ընկերությանը պատճառված վնասի դեպքում պատասխանատվության հարցի առանձնահատկությունները, մասնավորապես՝ պարզել՝ արդյո՞ք կորպորատիվ կառավարման մարմինների պատասխանատվությունը տարբերվում է պայմանագրային կամ դելիկտային պատասխանատվություններից: Կառավարման մարմինների պատճառած վնասի պատասխանատվության բնույթը բացահատելու համար անհրաժեշտ է պարզել, թե պատասխանատվության ենթարկելու համար ինչ հանգամանքներ են պարզման ենթակա:

Տեսական գրականության մեջ կան տարբեր կարծիքներ կառավարման մարմինների անդամների պատասխանատվության բնույթի վերաբերյալ:

Պատասխանատվության պայմանագրային բնույթի կողմնակիցները² նշում են, որ կառավարման մարմնի համապատասխան անդամի լիազորություններն իրականացնող անձի և Ընկերության միջև կնքված պայմանագրի չկատարման կամ ոչ պատշաճ կատարման հիմքով միայն կարող է առաջ քաշվել կառավարման մարմնի պատասխանատվության հարցը: Որոշ իրավաբան գիտնականների կարծիքով՝ կորպորատիվ կառավարման մարմինների պատճառած վնասը կրում է դելիկտային բնույթ³: Նույն տեսակետը կիսում էին նաև Ռուսաստանի Ղաշնության քաղաքացիական օրենսդրության զարգացման հայեցակարգի հեղինակները⁴:

Կորպորատիվ կառավարման մարմինների պատասխանատվության հարցը կարող է ունենալ որոշակի նմանություն պայմանագրային կամ դելիկտային պարտավորությունների հետ, սակայն այդ պատասխանատվության տեսակներից ոչ մեկը ամբողջությամբ չի նույնանում Օրենքով սահմանված կառավարման մարմինների պատասխանատվության բնույթի հետ: Սրա մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Օրենսդիրը առանձին պատասխանատվության ենթարկելու չափանիշներ և դրանցից ազատման հանգամանքներ է նախատեսել Օրենքով՝ տալով առանձնահատկություն քննարկման առարկա դարձած պատասխանատվության բնույթին:

¹ ՀՀՊՏ 2001.11.06/34(166): Այսուհետ նաև՝ Օրենք:

² Տե՛ս **Маковская А. А.** Основания и размер ответственности руководителей акционерного общества за причиненные обществу убытки // Убытки и практика их возмещения: Сборник статей / отв. ред. **М. А. Рожкова**. М.: Статут, 2006. էջ 329-372; **Тычинская Е. В.** Указ. соч. էջ 138-139; **Хныкин В. И.** Гражданско-правовая ответственность органов управления акционерных обществ по законодательству Российской Федерации. Автореф. дис. ... канд. юрид. наук: 12.00.03. М., 2005.

³ Տե՛ս **Алейникова В. В.** Страхование гражданской ответственности единоличных, членов коллегиальных исполнительных органов хозяйственных обществ. Дис. ... канд. юрид. наук: 12.00.03. М., 2016, էջ 61-66; **Богатырев Ф. О.** Ответственность директора за убытки, причиненные хозяйственному обществу // Убытки и практика их возмещения: Сборник статей / отв. ред. **М. А. Рожкова**. М.: Статут, 2006, էջ 383-384:

⁴ Տե՛ս Концепция развития гражданского законодательства Российской Федерации (одобрена решением Совета при Президенте РФ по кодификации и совершенствованию гражданского законодательства от 07.10.2009) // Вестник ВАС РФ. 2009. № 11.

Ընկերության առջև պատասխանատվության առանձնահատկություններից, ի թիվս այլ հանգամանքների, այն է, որ կառավարման մարմինների պատճառած վնասը կարող է լինել տարբեր դրույթների խախտմամբ, և պարտադիր չէ, որ խախտված լինի որևէ իրավանորմով սահմանված դրույթ կամ պայմանագրի շրջանակներում թույլ տրված խախտում, այլ հնարավոր է մի իրավիճակ, երբ անկախ պայմանագրում դրա նշված լինելու հանգամանքից՝ վրա հասնի վնասի փոխհատուցման անհրաժեշտությունը: Խոսքը ֆիդուցիար պարտականության խախտման մասին է, ինչն էլ, կարծում ենք, այն գլխավոր տարբերակիչ հատկանիշներից մեկն է, որը կառավարման մարմինների պատասխանատվության բնույթին տարբերակում է դեֆիկտային և պայմանագրային պատասխանատվության տեսակներից:

ՀՀ-ում Օրենսդիրը սահմանել է ֆիդուցիար պարտականությունը որպես օրենքի ուժով կառավարման համապատասխան մարմինների վրա տարածվող պարտականություն, որի խախտման դեպքում միայն կարող է առաջանալ վնասի փոխհատուցման անհրաժեշտություն:

Ֆիդուցիար պարտականության հասկացությունը սկիզբ է առել ԱՄՆ-ում և Անգլիայում, երբ 1986 թվականին առաջին անգամ հոգատարության և բարեխղճության հասկացությունները սկսվեցին օգտագործվել Անգլիայի՝ սնանկության մասին օրենքում¹, իսկ առաջին անգամ դատական պրակտիկայում այն կիրառվեց 1994 թվականին *Re D'Jan of London Ltd* գործով: Ֆիդուցիար պարտականության նպատակն է կանխել իրավունքի չարաշահման հնարավորությունը հատկապես կորպորատիվ կառավարման մարմինների կողմից²:

Ֆիդուցիար պարտականությունների իրավական մոդելը կիրառվում է մայրցամաքային իրավական ընտանիքի երկրներում: Դրանց հիմքում ընկած է բենեֆիցիարի լեգիտիմ ակնկալիքը: Ներկայումս կորպորատիվ իրավունքում ֆիդուցիար պարտականությունները հիմնականում տարածվում են գործադիր մարմնի ղեկավարի (կոլեգիալ) պարտականությունների վրա³: Որոշ իրավաբանների կարծիքով՝ ֆիդուցիար պարտականություն է այն, որ բաժնետերերը որոշումներ կայացնելիս պետք է հավատարիմ լինեն Ընկերությանը և առաջնորդվեն վերջինիս շահերից ելնելով⁴: Ուստի, բաժնետերերը պետք է ձեռնպահ մնան ցանկացած գործողությունից, որը կարող է վնաս պատճառել կորպորատիվ հարաբերությունների մասնակիցներին⁵:

Օրենքի 90-րդ հոդվածի վերլուծությունից բխում է, որ ՀՀ-ում ֆիդուցիար պարտականությունների կարգավորումները չեն տարածվում Ընկերության բաժնետերերի վրա, սակայն SՀԶԿ-ի համընդհանուր սկզբունքներից է բխում, որ Ընկերության բաժնետերերը պետք է գործեն ի շահ Ընկերության և իրենց որոշումները ընդունելիս լինեն բարեխիղճ և չեզոք, իսկ Օրենքի 90-րդ հոդվածով սահմանվում է, որ ՀՀ-ում ֆիդուցիար պարտականությունները տարածվում են խորհրդի անդամների, Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրեն), վարչության ու տնօրենության անդամների, ինչպես նաև կառավարիչ-կազմակերպության և կառավարչի վրա:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարող ենք արձանագրել, որ կառավարման մարմնի

¹ St´u Insolvency Act 1986 // <http://www.legislation.gov.uk/ukpga/1986/45/contents>

² St´u **Cahn A.** The Shareholders' Fiduciary Duty in German Company Law // Shareholders' Duties / ed. **H. S. Birkmose.** Kluwer Law International, 2017. էջ 348: <https://ssrn.com/abstract=3126695> (էլեկտրոնային հասանելիությունը 23.03.23 թվականի դրությամբ):

³ St´u **Iman Anabtawi and Lynn Stout,** «Fiduciary Duties for Activist Shareholders», Stanford Law Review Vol. 60, No. 5 (Mar., 2008), էջ 1262:

⁴ St´u **Grantham, R.**, «The Doctrinal Basis of the Rights of Company Shareholders», The Cambridge Law Journal, Vol. 57, No. 3 (Nov., 1998), էջ 577:

⁵ St´u **Bratina B., Jovanovic D.** Shareholders' Duty of Loyalty and Positive Voting Duty // China-USA Business Review. 2014. Vol. 13, no. 5., էջ 349:

պատասխանատվության բնույթի և պայմանագրային կամ դելիկտային պատասխանատվությունից տարբերակիչ գլխավոր հատկանիշներից է ֆիդուցիար պարտականության առկայությունը, որը տարածվում է մարմինների վրա Օրենքի ուժով:

Օրենքով սահմանված ֆիդուցիար պարտականության հասկացությունից բխում է, որ Օրենքի ուժով և անկախ կառավարման մարմնի հետ կնքված պայմանագրի բովանդակությունից անձը ունի ֆիդուցիար պարտականություն, ինչը ենթադրում է հետևյալ պարտականությունների պահպանումը.

1. գործել Ընկերության շահերից ելնելով,
2. իրացնել իրավունքները և կատարել պարտականությունները բարեխիղճ,
3. խուսափել Ընկերության և անձնական շահերի միջև իրական և հնարավոր բախումներից:

Հաջորդ առանձնահատկությունը պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմքում ընկած հանգամանքների շրջանակն է:

Ինչպես արդեն նշել էինք, ներկայումս ձևավորվել է այն պրակտիկան, որ պատճառված վնասի համար պատասխանատվության առաջացման հիմքում դրվում են հետևյալ 4 հանգամանքները՝ վնաս պատճառողի ոչ օրինաչափ վարքագծի, վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային կապի ու վնաս պատճառողի մեղքի միաժամանակյա առկայությունը:

Ինչպես հայտնի է, քաղաքացիական պատասխանատվության կիրառման հիմք է համարվում քաղաքացիական իրավախախտում կատարելու փաստը: Վերջինս ընդունված է համարել մեղավոր հակաիրավական արարք, որը վնաս է պատճառում այլ անձի գույքային կամ անձնական ոչ գույքային իրավունքներին¹:

Օրենքի 90-րդ հոդվածի վերլուծությամբ հստակ երևում է, որ կորպորատիվ կառավարման մարմնի պատասխանատվության հիմքերից մեկն է ոչ իրավաչափ վարքագիծը, ինչը ինքնին ֆիդուցիար պարտականության խախտում է:

Ֆիդուցիար պարտականությունը շատ լայն շրջանակ ունի, որի խախտում առաջանում է ոչ միայն այն դեպքում, երբ կառավարման որևէ մարմին խախտում է իր և Ընկերության միջև կնքված պայմանագրի² որևէ դրույթ, այլ նաև Օրենքի ուժով նրա վրա տարածվող որևէ այլ պարտականություն:

Նման պայմաններում միանշանակ կարող ենք արձանագրել, որ Խորհրդի անդամների, տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրենության անդամների, կառավարիչ-կազմակերպության և կառավարչի պատասխանատվության ենթարկելու առաջին հիմքը ոչ իրավաչափ վարքագիծն է՝ ֆիդուցիար պարտականության խախտումը, որը ներառում է ինչպես պայմանագրում եղած դրույթների խախտումներ, այնպես էլ պայմանագրում բացակայող դրույթների խախտումներ, որոնք բխում են Ընկերության շահերից: Ընդ որում, տվյալ դեպքում հակաիրավական արարքը կարող է դրսևորվել ինչպես պարտականությունների խախտմամբ (գործողությամբ), այնպես էլ պարտականությունների չկատարմամբ (անգործությամբ):

Վնասի համար պատասխանատվության առաջացման հաջորդ պայմանը վնասի առկայությունն է: Ինչպես քննարկման առարկա դարձած իրավանորմի, այնպես ՀՀ քաղաքացիական օրենսդրության վերլուծությունից ակնհայտորեն բխում է, որ վնասի առկայությունն է այն կարևոր նախապայմաններից մեկը, որը անկախ իրա-

¹ Տե՛ս ՀՀ քաղաքացիական իրավունք, 3-րդ մաս, 4-րդ հրատ. (լրացումներով և փոփոխություններով), խմբագիրներ **Տ. Կ. Բարսեղյան, Պ. Հ. Ղարախանյան**, ԵՊՀ հրատ., Երևան, 2011թ., էջ 12-20:

² Քանի որ պայմանագրի յուրաքանչյուր դրույթի խախտում ենթադրում է իրավունքների և պարտականությունների իրականացում, որը չի բխել Ընկերության շահերից, իսկ դա միտումնավոր կամ անփութությամբ կատարելը ենթադրում է անբարեխիղճ վերաբերմունք՝ ուղղված Ընկերության շահերին:

վահարաբերությունների առանձնահատկություններից, անհրաժեշտ է վնաս պատճառելուց բխող բոլոր պարտավորությունների առաջացման համար:

Պատասխանատվության մյուս նախապայմանն է ոչ իրավաչափ գործողությունների և առաջացած վնասի միջև պատճառական կապը: Այստեղ առանձնահատուկ կարևոր է նշել, որ և՛ իրավաբանական գրականությունը, և՛ դատական պրակտիկան ընդունում են, որ վնասի և հակաիրավական արարքի միջև պատճառական կապը պետք է լինի ուղղակի և հաստատված, հակառակ դեպքում անուղղակի պատճառական կապը չի կարող պատասխանատվության պայման դառնալ¹: Անուղղակի պատճառական կապը, ինչպես արդեն նշեցինք, պատասխանատվության պայման չէ պարտավորական իրավահարաբերությունների այլ ինստիտուտներում, և կարծում ենք, որ կառավարման մարմնի պատասխանատվությունը չի կարող վրա հասնել, եթե պատճառված վնասի և նրա կատարած գործողության (անգործության) միջև պատճառական կապը ուղղակի չէ:

Կորպորատիվ կառավարման մարմինների պատասխանատվության առաջացման մյուս պայմանը բնորոշ է միայն այս իրավահարաբերությունների բնույթին, մասնավորապես՝ Օրենքի 90-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ պարբերության համաձայն՝ «խորհրդի կամ Ընկերության տնօրենի (գլխավոր տնօրենի), վարչության ու տնօրենության անդամների, կառավարիչ-կազմակերպության և կառավարչի պատասխանատվության հիմքերի և չափի որոշման ժամանակ պետք է հաշվի առնվեն գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները»:

Իրավանորմի վերլուծությունից բխում է, որ օրենսդիրը բաժնետիրական ընկերությունների վարչության և տնօրենության անդամներին պատասխանատվության ենթարկելու հարցում որոշակի առանձնահատկություն է սահմանել, քանի որ այստեղ պատասխանատվության ենթարկվելիս պետք է հաշվի առնվեն նաև գործարար շրջանառության սովորույթները և գործի համար կարևոր նշանակություն ունեցող մյուս հանգամանքները: Գործարար շրջանառության սովորույթներին վնաս պատճառած անձի գործողությունները համապատասխան լինելու կամ այլ հանգամանքների պարտադիր պարզման անհրաժեշտությունը բացակայում են վնասի հատուցման կամ պարտավորական իրավահարաբերությունների այլ ինստիտուտներում, հետևաբար պատասխանատվության առաջացման հետևյալ պայմանը պետք է քննարկման առարկա դարձվի կառավարման մարմինների պատասխանատվության հիմքերը քննարկելիս:

Ինչպես նաև վստահորեն կարող ենք արձանագրել, որ օրենսդիրը, տալով առանձնահատկություն կորպորատիվ կառավարման մարմիններին և նրանց ծավալած բիզնես գործունեությանը, հնարավորություն է տվել թույլ տալ բիզնես սխալ, որի համար պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է հաշվի առնվեն վերոնշյալ հանգամանքները:

Հաջորդ և վերջին նախապայմանը, կարծում ենք, մեղքի առկայությունն է վնաս պատճառած անձի մոտ:

Ըստ Ի. Ս. Շիտկինայի, երբ տնօրենի արարքներում բացակայում է խելամտությունը, և նա թույլ է տալիս անհեռատես արարքներ, որի հետևանքով վնաս է պատճառվում Ընկերությանը, անհրաժեշտ է, որ առկա լինի մեղքը, իսկ մեղքի բացակայության դեպքում նա չի կարող ենթարկվել պատասխանատվության²: Այլ իրավական համակարգերում Ընկերության կառավարման մարմնին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ տարբեր մոտեցումներ կան, մասնավորապես՝ անհրաժեշտ է, որ տնօրենը կոնկրետ գործարքի համար երաշխավորած լինի, և միայն նրա երաշխավորության պայմաններում կարելի է նրան ենթարկել պա-

¹ Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք, Երկրորդ մաս, էջ 608:

² Տե՛ս **И. С. Шиткина**, Учебный курс. В 2 т. / Т. 2. М.: Статут, 2018, էջ 755:

տասխանատվության (solidary liability)¹:

Քննարկվող պարտավորության մեկ այլ առանձնահատկություն է իրավախախտի անմեղության կանխավարկածը՝ օրենսդիրը Օրենքում մասնավորապես սահմանել է հետևյալ ձևակերպումը. «Անձն ազատվում է սույն հոդվածով սահմանված՝ Ընկերությանը պատճառված վնասի համար պատասխանատվությունից, եթե գործել է բարեխիղճ՝ չգիտեր կամ չէր կարող իմանալ, որ իր գործողությունների (անգործության) հետևանքով Ընկերությունը կկրի վնասներ (Օրենքի 90-րդ հոդվածի 4-րդ մաս):

Իրավանորմի վերլուծությունից հետևում է, որ հոդվածում օրենսդիրը սահմանել է այնպիսի հանգամանքներ, որոնք պարտադիր են պատասխանատվության հիմքերը պարզելու համար, այնպես էլ պատասխանատվությունից ազատման հիմք, մասնավորապես ֆիդուցիար պարտականության տարերից մեկի՝ բարեխնության առկայության դեպքում, անկախ նրանից՝ անձը թույլ է տվել ոչ իրավաչափ վարքագիծ, թե ոչ, միևնույն է, ազատվում է պատասխանատվությունից:

Օրենքի իմաստով բարեխնությունը անձի սուբյեկտիվ վերաբերմունքն է իր կողմից թույլ տրված ոչ իրավաչափ վարքագծին, թերևս այս հիմնավորմամբ է, որ կարծում ենք՝ Օրենքի իմաստով բարեխնության հետ, որպես պատասխանատվության պայման, կարող ենք զուգահեռներ տանել մեղքի հետ՝ որպես դելիկտային կամ պայմանագրային պատասխանատվության պայման:

Մասնավորապես. ինչպես գիտենք, մեղքը կարող է դրսևորվել ինչպես օբյեկտիվ իմաստով, այնպես էլ՝ սուբյեկտիվ: Օբյեկտիվ իմաստով մեղքը հասկացվում է անձի կողմից պարտավորությունը պատշաճ կատարելու համար իրենից կախված բոլոր հնարավոր և խելամիտ միջոցները չձեռնարկելը: Մեղքը սուբյեկտիվ իմաստով կարող է դրսևորվել դիտավորության տեսքով, մասնավորապես՝ երբ անձը, իմանալով հանդերձ, որ իր գործողություններով կարող է վնաս պատճառել, դիմում է այդ քայլին: Նման պայմաններում պարզ է դառնում, որ օրենսդիրը, տարանջատելով կորպորատիվ իրավահարաբերությունների առանձնահատկությունները, սահմանել է կորպորատիվ կառավարման մարմինների անմեղության կանխավարկածը, որում պարտադիր գնահատման հանգամանք է մշտել անձի կողմից իր արարքի սուբյեկտիվ ընկալումը (կառավարման մարմնի ոչ իրավաչափ արարք գործելու մասին չիմանալը), ինչպես նաև նրա հնարավորությունը դա իմանալու: Ընդ որում, վերոգրյալից բխում է նաև, որ դրա ապացուցման պարտականությունը պետք է դրվի այն անձի վրա, ով մատնանշել է ոչ իրավաչափ վարքագծի առկայությունը:

Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Ընկերության կառավարման մարմնին իր կողմից պատճառված վնասի համար պատասխանատվության ենթարկելու հարցը պարզելու համար պարզման ենթակա հանգամանքներից մեկը պետք է հանդիսանա անձի անբարեխիղճ լինելու հանգամանքը: Ղա փաստացի նշանակում է մեղքն ապացուցելու անհրաժեշտություն, հետևաբար քննարկման առարկա դարձած պատասխանատվությունը դելիկտային պարտավորություններից և պայմանագրային պարտավորություններից առաջացող պատասխանատվությունից տարբերվում է նրանով, որ վնաս պատճառողի մեղքը առկա է այնքան ժամանակ, քանի դեռ հակառակը չի ապացուցել վնաս պատճառած անձը:

Ամփոփելով վերոգրյալը՝ կարծում ենք, որ Խորհրդի անդամ(ներ)ին, տնօրենին (գլխավոր տնօրենը), վարչության ու տնօրենության անդամ(ներ)ին, կառավարիչ-կազմակերպությանը և կառավարչին պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ են հետևյալ պայմանների միաժամանկյա առկայությունը.

- 1) ոչ իրավաչափ վարքագիծը (ֆիդուցիար պարտականության խախտում),
- 2) վնասի առկայությունը,
- 3) վնասների և ոչ օրինաչափ գործողության միջև պատճառահետևանքային

¹ St´u Bar C. Gemeineuropä isches Deliktsrecht. München, 1999, էջ 212:

Կապը,

4) վնաս պատճառողի արարքում գործարար շրջանառության սովորույթների և նմանատիպ այլ հանգամանքների բացակայությունը,

5) մեղքի առկայությունը (անբարեխղճությունը):

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ ОТВЕТСТВЕННОСТИ ОРГАНОВ УПРАВЛЕНИЯ АКЦИОНЕРНЫХ ОБЩЕСТВ

Мартик Хачикян

Юрист ООО «Би Эл Си», адвокат

Статья посвящена корпоративной ответственности акционерных обществ как отдельному виду гражданско-правовой ответственности.

Под ответственностью органов корпоративного управления понимается юридическая ответственность, которую несут член (члены) совета директоров, директор (исполнительный директор), член (члены) совета и дирекции, управляющая организация и руководитель за свои действия и решения. Иными словами, если какой-либо из субъектов, осуществляющих корпоративное управление, не выполняет взятые на себя обязанности или делает это небрежно, то данный орган несет ответственность как перед данным акционерным обществом, так и перед его заинтересованными сторонами за причиненный им ущерб.

Выявление особенностей ответственности органов корпоративного управления и выделение оснований ответственности, возникающей в результате иных обязательств, направлено на обеспечение четкого и эффективного разрешения споров, возникающих в корпоративных правоотношениях, а также выяснение обстоятельств, которые должны обсуждаться при принятии решения о возмещении причиненного ущерба.

В данной статье рассмотрены законодательство РА, регулирующее ответственность органов корпоративного управления акционерных обществ, законодательство ряда зарубежных стран, судебная практика и подходы различных правоведов.

В частности, обсуждается необходимость специальной правовой квалификации характера ответственности органов управления в корпоративных отношениях и обстоятельств, подлежащих выяснению, для привлечения к ответственности органов управления акционерных обществ.

SOME ISSUES OF RESPONSIBILITY OF MANAGEMENT BODIES OF JOINT-STOCK COMPANIES

Martin Khachikyan

Lawyer

The article is devoted to the corporate liability of joint-stock companies as a separate type of civil liability.

The responsibility of corporate governance bodies is understood as the legal responsibility that a member (members) of the board of directors, a director (executive director), a member (members) of the council and directorate, a managing organization and a head bear for their actions and decisions. In other words, if any of the entities exercising corporate governance does not fulfill its obligations or does it negligently, then this body is liable both to this joint-stock company and to its stakeholders for the damage caused to them.

Identification of the specifics of the responsibility of corporate governance bodies and the allocation of grounds for liability arising from other obligations is aimed at ensuring a clear and effective resolution of disputes arising in corporate legal relations, as well as clarifying the circumstances that should be discussed when making a decision on compensation for the damage caused.

This article discusses the legislation of the Republic of Armenia, which regulates the responsibility of corporate governance bodies of joint-stock companies, the legislation of a number of foreign countries, judicial practice and the approaches of various jurists.

In particular, there was discussed the need for a special legal qualification regarding the responsibility of management bodies in corporate relations and the clarification of the circumstances holding the liability of bodies of joint-stock companies.

Բանալի բառեր - իրավաբանական անձ, քաղաքացիաիրավական պատասխանատվություն, կորպորատիվ կառավարում, կորպորատիվ իրավախախտում, բարեխղճության սկզբունք, ֆիդուցիար պարտականություն, մեղք, վնաս:

Ключевые слова: юридическое лицо, гражданско-правовая ответственность, корпоративное управление, корпоративный деликт, принцип добросовестности, фидуциарная обязанность, вина, убыток.

Key words: legal entity, civil liability, corporate governance, corporate tort, principle of good faith, fiduciary duty, guilt, loss.